

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՏԵՐ ՎԱԶԳԵՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Ծանր կորուստ կրեց հայ ժողովուրդը: 1994 թուականի Օգոստոսի 18-ին, երկարատև հիւանդութիւնից յետոյ, վախճանուեց Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր Վազգէն Առաքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայ ժողովուրդը եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին կորցրին իրենց մեծ երախտաւորին, որը շուրջ քառասունամեայ իր գործունէութիւնն ամբողջովին նուիրեց ազգային միասնութեան ամրապնդման, հոգեւոր վերածնութեան եւ Հայկական Պետականութեան վերականգնման վեհ գործին:

Վեհափառ Հայրապետն անցել է հայ հոգեւորականի երկար ու բեղուն ճանապարհ: Ծնուել է 1908 թ. Սեպտեմբերի 20-ին, Բուխարեստում, Պայճեանների ընտանիքում: Ապագայ կաթողիկոսը՝ Լեւոն-Կարապետ Պայճեանը, նախնական կրթութիւնը ստացել է Բուխարեստում, այնուհետեւ 1936-ին աւարտել է Բուխարեստի Պետական համալսարանի գրականութեան եւ փիլիսոփայութեան բաժանմունքը, ուսանել նոյն համալսարանի աստուածաբանական ֆակուլտետում, 1937 -ին հրատարակել է «ՇԵՐԿ» մշակութային-հասարակագիտական ամսագիրը: 1943-ին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ վերանուանուելով Տէր Վազգէն: 1948-ին Գէորգ Չ. Կաթողիկոսի կողմից օծուել է Սայրազոյն վարդապետ, նոյն թուականին ընտրուել ռումինահայ թեմի առաջնորդ, ապա՝ 1951-ին ձեռնադրուել եպիսկոպոս:

1955 թուականի Սեպտեմբերի 30-ին Վազգէն եպիսկոպոս Պայճեանը ընտրուում է Ամենայն Հայոց Կաթողիկոս: Այս պահից աւելի ցայտուն է դառնում Վեհափառ Հայրապետի հայրենասնուէր տքնանքը: Իր գահակալութեան առաջին իսկ տարիներից նա ձեռնարկեց ծաւալուն աշխատանքներ, շէնացնելով Մայր Աթոռը, վերաբացելով Վեհարանը, Գէորգեան հոգեւոր ձեւարանը, տասնամեակներ լռած եկեղեցիներ ու վանքեր, կապակերպելով նորանոր հոգեւոր թեմեր: Նա կարողացաւ արթնալուստական պետական մեքենայի անթաքոյց ճնշման պայմաններում պահպանել եւ ապրեցնել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին՝ իր կառոյցներով եւ առաքելութեամբ:

Վեհափառ Հայրապետի գիտական, աստուածաբանական, մանկավարժական երկասիրութիւնները հայ հոգեւոր մշակոյթի գանձարանի մնայուն արժէքներից են: Ի նշան արգասաբեր գիտական եւ հոգեւոր գործունէութեան, Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիան 1991-ին նրան ընդունում է պատուաւոր ակադեմիկոս:

Մեծ է նրա դերը աշխարհասփիւռ հայ գաղթօջախները եւ եկեղեցիները Մայր Հայրենիքի շուրջ համախմբելու գործում:

Իբրեւ ժողովրդականութիւն վայելող հեղինակութիւն, համազգային պարթօնքի փորձութիւններով լի տարիներին նա իմաստուն յորդորներով շրջահայեաց գործողութիւնների է կոչում իր հօտին: Ամենայն կարեկցութեամբ աջակցութիւն ապահովում բազմաճիւղ հայ փախստականներին, գօտեպնդում Լեւոնային Ղարաբաղի ապստամարտիկ զինուորներին: Նրա հայրական օրհնութեամբ կնքուեց Հայաստանի անկախութեան հանրաքուէի վաւերագիրը, նրա հայրական օրհնութեամբ իրենց առաքելութիւնը ստանձնեցին Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահը եւ խորհրդարանը: Վեհափառ Հայրապետը մեծագոյն աւանդ ունեցաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման գործում: Եւ ի գնահատումն ազգային հոգեւոր արժէքների պահպանութեան եւ պարգացման գործում դրսեւորած անձնուրաց նուիրումին ու մատուցած բացառիկ ծառայութիւններին, 1994 թուականի յուլիսի 28-ին, նա առաջինն արժանացաւ Հայաստանի Ազգային հերոսի բարձրագոյն կոչմանն ու Հայրենիքի շքանշանին:

Հայոց 130-րդ հայրապետը մեր ազգային ու պետական գոյութեան յաւերժական ճանապարհին թողեց իր բացառիկ արժէքաւոր հետքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Օգոստոսի 18, 1994 թ.